

155 5th Ave., New York, N. Y.
Rooms 1012-1013

Telephone Chelsea 1791

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

1.- Տօնակատարութեանց նախաձեռնութեան ու դեկավարութեան իրաւունքը կը պատկանի Հայաստանեայց Եկեղեցւոյ Հովիւներուն եւ Հոգաբարձութիւններուն: .

2.- Իւրաքանչիւր վայրի հովիւ եւ հոգաբարձութիւն պարտին ամիջապէս խորհրդակցութեան հրաւիրել գաղութին եկեղեցական, կրթական եւ քաղաքական կազմակերպութեանց ներկայացուցիչները հանդիսին ծրագիրը մշակելու:

3.- Հոն ուր չունին հովիւ ու հոգաբարձութիւն վերոյիշեալ կազմակերպութեանց որեւէ մէկը կրնայ ստանձնել նախաձեռնութիւնը:

4.- Տօնակատարութիւնը պիտի ունենայ երեք մաս.

X ա) Առաւօտուն հանդիսաւոր պատարագ: Քարոզի միւթը պիտի կազմեն Թարգմանիչները եւ անոնց կատարած դերը:

բ) Կէսօրէ յետոյ համախմբել 8-18 տարեկան կայ երկսեռ մանուկները, շքեղ թափօրով-առաջնորդել զանոնք ժողովարարի եւ խնամեալ դասախօսութեամբ մը բացատրել անոնց օրուան նշանակութիւնը: Հանդիսին մէջ տեղի պիտի ունենան մեներգ, խմբերգ, արտասանութիւն, եւն.

X 5.- Երեկոյին սարքել հրապարակային մեծ հանդէս, ճառերու, երգերու, արտասանութեանց, եւն. նոյս յայտագրով:

6.- Հանդէսներուն մուտքը պիտի ըլլայ ազատ: Ծախֆերը փակելու համար հոգաբարձութիւնները կրնան պնակ մը դնել սրահին դուռը եւ ստանալ ազգայիններու կամաւոր նուէրները:

7.- Նկատի ունենալով տօնին համազգային բնուէթը, կը թելադրենք մեր ամէն կարգի կազմակերպութիւններուն չսարքել մեկուսի հանդէսներ ու ժողովներ: Հոկտեմբերի 14-ը նուիրուած է Հայկական Մշակոյթին:

8.- Փափաքելի է որ մեր թերթերը իրենց այդ օրուան թիւը նուիրեն Հայկական Մշակոյթին եւ խմբագրական ու անհատական յօդուածներով ի վեր հանեն օրուան նշանակութիւնը: .

9.- Այն գաղութները, որոնք արգելիչ պատճառներով անկարելի կը գտնեն այսպիսի տօնակատարութիւն մը Հոկտ. 14-ին, կրնան իրենց հանդէսները սարքել հետեւեալ Կիրակի, Հոկտ. 21-ին:

Ի դիմաց Ազգային Կեդրոնական Վարչութեան

Ատենապետ

Ատենադպիր

Քարտուղար Առաջնորդարանի

Տէրաշապուհ

Գրիգոր Կր

Գր. Գրիգորյան

